Հավելված 6
«ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով
Գնանշման հարցման հրավերի

# <ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ> ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N «ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1/5»

ք. Գորիս «03» փետրվար 2020 թ.

<Գորիսի բժշկական կենտրոն> ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն Դ.Մաշուրյանի, որը գործում է <Գորիսի բժշկական կենտրոն> ՓԲԸ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և « Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ա.Ասատրյանի, որը գործում ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 3813194 /երեք միլիոն ութ հարյուր տասերեք հազար հարյուր մեկ հարյուր իննսունչորս/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու

նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը

կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ

հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի

օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների

մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ | <Նատալի ֆարմ> ՍՊԸ |
| Հասցե՝ ք. Գորիս, Գր.Տաթևացի 31 | ք. Երևան, Տիչինայի 3նրբ. 22 |
| Բանկ՝ «Արդշինբանկ», Գորիս մ/ճ | <Ամերիա բանկ> ՓԲԸ |
| Հ/Հ 2475700530300010 | Հ/Հ 1570005065330100 |
| ՀՎՀՀ 09211641 | ՀՎՀՀ 01222567 |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
« 03 » փետրվար 2020 թ. կնքված
«ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/1/5» ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | Մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը ** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը*** |
| 9 | 33651125 | Ազիթրոքս 100մգ/5մլ 20մլ արվ. №1 | Ֆարմստանդարտ-Լեքսրեդստվա | ազիթրոմիցին (ազիթրոմիցինի դիհիդրատ)<br><br>դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի 100մգ/5մլ,50մլ ապակե 22հկ 15.9գ դեղափոշով(20մլ պատրաստի դեղակախույթի համար), չափիչ գդալ և կաթոցիկ | հատ | 1445 | 144500 | 100 | Ք.Գորիս, Գր.Տաթև ացի 31 | Համաձայն պատվերի: Գնման ենթակա ապրանքների քանակները համարվում են առավելագույն մատակարարվող քանակներ՝ որոնք ըստ կարիքի կարող են նվազել | 2020 թվականին ապրանքը կմատակարարվի այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագի |
| 15 | 33691185 | Ալբումին 10% լ-թ ներարկման համար | Ալբումին-Բիոֆարմա | Մարդու ալբումին human albumin լուծույթ կաթիլաներարկման 100մգ/մլ, 100մլ | հատ | 17450 | 87250 | 5 | | | |
| 17 | 33611110 | Մաալոքս ծամելու դ/հ | Սանոֆի-Ավենտիս Ս.պ.Ա., Ստրադա Ստատալե N17- 22 կմ, 67019 Սկոպիտո | ալյումինիումի հիդրօքսիդ, մագնեզիումի հիդրօքսիդaluminium hydroxide, magnesium hydroxideդեղահատեր ծամելու400մգ+400մգ, բլիստերում (40/4x10/) | հատ | 37.69 | 7538 | 200 | | | |
| 19 | 33671125 | Ամբրոքսոլ 30մգ | «Լեկխիմ-Խարկով» Մասնավոր Բաժնետիրական Ընկերություն | ամբրոքսոլ (ամբրոքսոլի հիդրոքլորիդ)ambroxol (ambroxol hydrochloride)30մգ,բլիստերում (20/2x10/) | դեղահատ | 9.1 | 9100 | 1000 | | | |
| 20 | 33671125 | Ամբրոքսոլ օշարակ | Ջորոփկե Դեղագործական Ընկերություն ՍՊԸ | ամբրոքսոլ (ամբրոքսոլի հիդրոքլորիդ) ambroxol (ambroxol hydrochloride)օշարակ15մգ/5մլ, | հատ | 630 | 63000 | 100 | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 100մլ ապակե շշիկ և չափիչ գդալ 5մլ | | | | | | | ր կնքելու օրվանից հաշված 20 օրացույցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ/, մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում: |
| 22 | 33621390 | Արիտմիլ դ/հ 200մգ | Էս Այ Սի "Բորշչագովյան քիմիադեղագործա-կան գործարան" ՀԲԸ | Ամիոդարոն amiodarone դեղահատ 200մգ | դեղահատ | 48 | 48000 | 1000 | | | |
| 25 | 33621740 | Ամլոդիպին 5մգ | Բելմեդպրեպարատ ի | (ամլոդիպինի բեզիլատ) դեղահատեր 5մգ,բլիստերում (10/1x10/,30/3x10/) | դեղահատ | 6.8 | 3400 | 500 | | | |
| 27 | 33651111 | Ֆլեմոքսին դ/հ 1 000մգ | Աստելաս Ֆարմա Յուրոփ Բ.Վ | ամօքսիցիլին (ամօքսիցիլինի տրիհիդրատ) amoxicillin (amoxicillin trihydrate)դեղահատեր տարրալուծվող1000մգ,բլիստերում (20/4x5/) | դեղահատ | 182.3 | 72920 | 400 | | | |
| 30 | 33651111 | Ամոքսացիլին 250մգ/5մլ օշարակ | Հեմոֆարմ | ամօքսիցիլին (ամօքսիցիլինի տրիհիդրատ)<br><br>գրանուլներ ներքին ընդունման դեղակախույթի250մգ/5մլ,40գ գրանուլներ ապակե սրվակում 100մլ դեղակախույթի համար | հատ | 768 | 153600 | 200 | | | |
| 33 | 33651112 | Ֆլեմոկլավ դ/հ 500մգ+125մգ | Ֆլեմոկլավ Սոլուտաբ Flemoclav Solutab, Աստելաս Ֆարմա Յուրոփ Բ.Վ., Սիլվիուսվեգ 62, 2333 ԲԷ Լեյդեն, Նիդերլանդներ | ամօքսիցիլին (ամօքսիցիլինի տրիհիդրատ), քլավուլանաթթու (կալիումի քլավուլանատ)amoxicillin (amoxicillin trihydrate), clavulanic acid (potassium clavulanate) | դեղահատ | 151.71 | 151710 | 1000 | | | |
| 36 | 33611350 | Ասկորբինաթթու 5,0մգ լ-թ ներարկման համար | Երևանի Քիմիադեղագործա-կան ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճա | ասկորբինաթթու ascorbic acidլուծույթ ներարկման50մգ/մլ, 5մլ ամպուլներ (10) | հատ | 51.84 | 311040 | 6000 | | | |
| 40 | 33621420 | Ատորվաստատին 10մգ | Բելմեդպրեպարա-տի ՀՈՒՁ, 220007, Մինսկ, Ֆաբրիտսիուս | ատորվաստատին (ատորվաստատին կալցիում)atorvastatin (atorvastatin calcium)դեղահատեր թաղանթապատ10մգ,բլիստերում, (10/1x10/, 30/3x10/) | դեղահատ | 16.39 | 20487.5 | 1250 | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 41 | 33621420 | Ատորվաստատին 20մգ | Բելմեդպրեպարա-տի ՀՈՒՁ, 220007, Մինսկ, Ֆաբրիտսիուս | ատորվաստատին (ատորվաստատին կալցիում) atorvastatin (atorvastatin calcium)դեղահատեր թաղանթապատ20մգ, բլիստերում (10/1x10/, 30/3x10/) | դեղահատ | 18 | 9000 | 500 | | |
| 44 | 33611130 | Ատրոպինի Սուլֆատ ամպ. մ/մ ն/ե 0,1% 1մլ | Դեղագործական Ընկերություն "Զդորովյե" ՍՊԸ, 61013, ք | ատրոպին (ատրոպինի սուլֆատ)atropine (atropine sulfate)լուծույթ մ/մ, ն/ե և ե/մ ներարկման1մգ/մլ, 1մլ ամպուլներ(10) | ամպուլա | 52 | 52000 | 1000 | | |
| 47 | 33691193 | Ատրոպինի Սուլֆատ ամպ. մ/մ ն/ե 0,1% 1մլ | Լիկվոր ՀՀ | արտիկային (արտիկայինի հիդրոքլորիդ),էպինեֆրին(էպինե ֆրինի հիդրոտարտրատ)<br><br>լուծույթ ներարկման<br><br>40մգ/մլ+0.01մգ/մլ,20մլ ապակե սրվակ | հատ | 1526.4 | 30528 | 20 | | |
| 53 | 33651170 | Ացիկլովիր 200մգ | Բելմեդպրեպա-րատի ՀՈՒՁ (220007, Մինսկ, Ֆաբրիտսիուս | ացիկլովիր aciclovirդեղահատեր200մգ, բլիստերում (10/1x10/, 20/2x10/),ստրիպում (10/1x10/, 20/2x10/) | դեղահատ | 18 | 1800 | 100 | | |
| 56 | 33691189 | Դոլվերտիկ դ/հ 16մգ | Մեդանա Ֆարմա ԲԸ, 98-200 Սիերադզ Վ. Լոկիետկա 10՝ բաց թողման հսկող, Կատալենտ Գերմանիա Շորնդորֆ ԳմբՀ, Շտայնբեյսշտրասե 1 ունդ 2, 73614, Շորնդորֆ, Գերմանիա | Բետահիստին betahistine դեղահատ 16մգ | դեղահատ | 119 | 119000 | 1000 | | |
| 57 | 33691189 | Դոլվերտիկ դ/հ 24մգ | Մեդանա Ֆարմա ԲԸ, 98-200 Սիերադզ Վ. Լոկիետկա 10, Լեհաստան | բետահիստին (բետահիստինի դիհիդրոքլորիդ) betahistine (betahistine dihydrochloride)դեղահատեր24մգ, | դեղահատ | 69 | 138000 | 2000 | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 59 | 33691811 | Բիսակոդիլի ուղիղաղիքային մոմիկներ 10մգ | Լեկխիմ-Խարկով ԲԸ, 36, 17-րդ Պարտսյեզդա փ., 61115 Խ | Բիսակոդիլ bisacodyl մոմիկներ ուղիղաղիքային 10մգ | Հատ | 49.6 | 99200 | 2000 | | | |
| 61 | 33621720 | Բիպրոլ դ/հ 5մգ | Մակիզ-Ֆարմա ՍՊԸ, 109029, Մոսկվա, Ավտոմոբիլնի պրոեզ | բիսոպրոլոլ (բիսոպրոլոլի ֆումարատ)bisoprolol (bisoprolol fumarate)դեղահատեր թաղանթապատ5մգ,բլիստերում | Դեղահատ | 7.1 | 7100 | 1000 | | | |
| 63 | 33661156 | Բրիմօպտիկ ակնակաթիլներ 10մլ | Լիկվոր ՓԲԸ, 0089, Երևան, Քոչինյան փ., 7/9 | բրիմոնիդին (բրիմոնիդինի տարտրատ), թիմոլոլ (թիմոլոլի մալեատ) brimonidine (brimonidine tartrate), timolol (timolol maleate)ակնակաթիլներ2մգ/մլ+6, 8մգ/մլ,10մլ սրվակ-կաթոցիկ | հատ | 3182 | 254560 | 80 | | | |
| 65 | 33691176 | Գաբագամմա դ/պ 300մգ | Մեդիս Ինտերնեյշընլ ա.ս., Պրումիսլովա 961/16, Բոլատ | գաբապենտինgabapentinդեղապատիճներ կոշտ300մգ,բլիստերում (20/2x10/, 50/5x10/) | դեղապատիճ | 161.79 | 16179 | 100 | | | |
| 68 | 33691176 | Գլիցերոլ 1.24 գ ուղիղաղիքային մոմիկ | Նիժֆարմ ԲԲԸ, 603950, ք. Նիժնի Նովգորոդ, ԳՍՊ-459, Ս | գլիցերոլglycerolմոմիկներ ուղիղաղիքային1,24գ | հատ | 126 | 25200 | 200 | | | |
| 71 | 33691138 | Գլյուկոզայի 40% լ-թ 5,0մլ | Երևանի Քիմիադեղագործա-կան ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճա | դեքստրոզ dextroseլուծույթ ներարկման400մգ/5մլ, 5մլ ամպուլներ (10) | ամպուլա | 42.12 | 16848 | 400 | | | |
| 74 | 33611360 | Դետրիմեդ կաթ. 15000ՄԵ/մլ 10մլ | Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ, Արարատի մարզ, ք. Մասիս, Մասիս | խոլեկալցիֆերոլcholecalciferolկաթիլներ ներքին ընդունման15000ՄՄ/մլ,10մլ ապակե 22իկ և կաթոցիկ | Հատ | 565 | 282500 | 500 | | | |
| 77 | 33661136 | Սիբազոն (Դիազեպամ) ամպ. 0,5% 2մլ | ԽԴՁ Զդրավլե նարոդու ՍՊԸ | դիազեպամ diazepamլուծույթ ներարկման5մգ/մլ, 2մլ ամպուլներ, բլիստերում (10, 10/2x5/) | ամպուլա | 84 | 42000 | 500 | | | |
| 81 | 33661164 | Դիտիլին ամպ. 20մգ/մլ 5մլ | Դարնիցա դեղագործական ֆիրմա ՄԲԸ, 02093, Կիև, Բորիսպիլսկա | սուքսամեթոնիում (սուքսամեթոնիումի յոդիդ)suxamethonium (suxamethonium iodide)լուծույթ | ամպուլա | 198 | 79200 | 400 | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | փ., 13, Ուկրաինա | ներարկման20մգ/մլ, 5մլ ամպուլներ, բլիստերում | | | | | |
| 82 | 33621768 | Դիլտիազեմ Ռետարդ դ/պ 90մգ | Էս.Մի. Ռումֆարմ Քոմպանի Ս.Ռ.Լ., Իլֆով, 75100 Օտոպեն | դիլտիազեմ (դիլտիազեմի հիդրոքլորիդ) diltiazem (diltiazem hydrochloride)դեղապատիճներ երկարատև ձերբազատմամբ90մգ, բլիստերում | դեղապատիճ | 45.49 | 9098 | 200 | | |
| 84 | 33631310 | Դիկլոֆենակ 25մգ/մլ 3,0մլ | Լեկխիմ-Խարկով ԲԸ, 36, 17-րդ Պարտսյեզդա փ., 61115 Խ | դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում)diclofenac (diclofenac sodium)լուծույթ մ/մ և ն/ե ներարկման25մգ/մլ, 3մլ ամպուլներ, բլիստերում | ամպուլա | 66 | 330000 | 5000 | | |
| 85 | 33631310 | Վոլտարեն Ռետարդ դ/հ 75մգ №20 | Նովարտիս Ֆարմա | դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում) diclofenac (diclofenac sodium)դեղահատեր երկարատև ձերբազատմամբ75մգ, բլիստերում | դեղահատ | 130.82 | 130820 | 1000 | | |
| 86 | 33631310 | Դիկլոֆենակ Օֆտալմիկ ակնակաթիլներ 0,1% 10մլ | Լիկվոր ՓԲԸ, 0089, Երևան, Քոչինյան փ., 7/9 | դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում)diclofenac (diclofenac sodium)ակնակաթիլներ1մգ/մլ, 10մլ սրվակ-կաթոցիկ | հատ | 1653.6 | 59529.6 | 36 | | |
| 88 | 33631310 | Դիկլոն մոմիկ 100մգ | Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ, Արարատի մարզ, ք. Մասիս, Մասիս | դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում) diclofenac (diclofenac sodium)մոմիկներ ուղիղաղիքային100մգ (10/2x5/) | հատ | 98.87 | 197740 | 2000 | | |
| 89 | 33631310 | Դիկլոն մոմիկ 12,5մգ | Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ, Արարատի մարզ, ք. Մասիս, Մասիս | դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում)diclofenac (diclofenac sodium)մոմիկներ ուղիղաղիքային12,5մգ(10/2x5/) | հատ | 92 | 18400 | 200 | | |
| 90 | 33691212 | Տուրբո Միկրոն Ջի դ/հ | ԳՄ Ֆարմասյուտիկալս ՍՊԸ, ԴՍՊ գրուպ 65, Քվեմո Ֆոնիչալա փ., Թբիլիսի, Վրաստան | դիոսմին, հեսպերիդին diosmin, hesperidin450մգ+50մգ, բլիստերում | դեղահատ | 79 | 79000 | 1000 | | |
| 91 | 33671130 | Դիմեդրոլ ամպ. 1% | Երևանի | դիֆենհիդրամին | ամպուլա | 22.68 | 272160 | 12000 | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1մլ | Քիմիադեղագործա-կան ֆիրմա ԲԲԸ | (դիֆենհիդրամինի հիդրոքլորիդ) diphenhydramine (diphenhydramine hydrochloride)լուծույթ ներարկման10մգ/մլ, 1մլ ամպուլներ | | | | | | | |
| 92 | 33671130 | Դիմեդրոլ դ/հ 0,05գ | Բելմեդպրեպարա-տի ՀՈԻՁ, Գրողնինսկի, Սկիդել, Կիգկիչ փ., 50 | դիֆենհիդրամին (դիֆենհիդրամինի հիդրոքլորիդ) diphenhydramine (diphenhydramine hydrochloride)դեղահատեր50մգ, բլիստերում | դեղահատ | 5.68 | 1136 | 200 | | | |
| 94 | 33691176 | Մոտիլիում դ/հ 10մգ | Յանսեն-Սիլագ, Դոմեն դե Մեգրեմոն, 27100 Վալ Դե Ռեյ | դոմպերիդոնdomperidoneդեղահատեր թաղանթապատ10մգ,բլիստերում | դեղահատ | 61 | 30500 | 500 | | | |
| 97 | 33651127 | Յունիդոքս դ/հ 100մգ | Աստելաս Ֆարմա Յուրոփ Բ.Վ., Հոգեմաատ 2, 7942 ՋԳ Մեփել | դօքսիցիկլին (դօքսիցիկլինի մոնոհիդրատ) doxycycline (doxycycline monohydrate) դեղահատեր տարրալուծվող100մգ,բլիստերում | դեղահատ | 256.9 | 385350 | 1500 | | | |
| 98 | 33611170 | Դրոտավերին ամպ. 20մգ/մլ 2մլ | "Բորիսովյան բուժպատրաստուկ-ների գործարան "ԲԲԸ | դրոտավերին (դրոտավերինի հիդրոքլորիդ)drotaverine (drotaverine hydrochloride)լուծույթ ներարկման20մգ/մլ, 2մլ ամպուլներ (10) | ամպուլա | 53.8 | 53800 | 1000 | | | |

*դեղերի տեղափոխումը, պահեստավորումը և պահպանումը պետք է իրականացվի համաձայն ՀՀ ԱՆ նախարարի 2010թ. 17-Ն հրաման

*դեղի պիտանիության ժամկետները զնորդին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը`
ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,
բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,
գ. առանձին դեպքերում, այն է` հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձնման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

